ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Լրամշակված տարբերակ

**Կ-252[1]-02.02.2018,26.02.2018-ՏՀ-011/2**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունից հանել «և վիճակագրական տվյալների» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 2.1-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «Սույն կետի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների վրա:» նախադասությունը:

**Հոդված 4.** Օրենքի 3-րդ հոդվածի՝

1) 1.1-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների» բառերը:

2) 2-րդ և 4-րդ մասերից հանել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության» բառերը,

2) 2-րդ մասի 8-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների» բառերը:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

Կ-252$^{1}$-02.02.2018,26.02.2018-ՏՀ-011/1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունից հանել «և վիճակագրական տվյալների» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 2.1-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «Սույն կետի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների վրա:» նախադասությունը:

**Հոդված 4.** Օրենքի 3-րդ հոդվածի՝

1) 1.1-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների» բառերը:

2) 2-րդ և 4-րդ մասերից հանել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության» բառերը,

2) 2-րդ մասի 8-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների» բառերը:

**Հոդված 6.** Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձման օրը:պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-252[1]-02.02.2018-ՏՀ-011/1) վերաբերյալ

| | Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունն ը նդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |
| **1.** | ՀՀ կառավարություն | Նախագծի 6-րդ հոդված | «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը» բառերով՝ օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը փաթեթի մյուս նախագծերի համապատասխան դրույթի հետ նույնականացնելու նպատակով: | Ընդունվել է | Ընդունվել է |